

ԴԻՄԱՅԻՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Դ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արդի հայերենի անդամ բառով արտահայտվող միակազմ նախադասությունները¹ ուսումնասիրության նյութ են դարձել մեր դարի երկրորդ կեսից՝ Ս. Արրահամյանը, Վ. Առաքելյանը, Ս. Գյուլբուրդյանը, Գ. Ջահուկյանը² և ուրիշ լեզվաբաններ քննության են առել անդամ բառով արտահայտվող միակազմ նախադասությունների արտահայտման միջոցները, դրանց առանձնահատկություններն ըստ կազմության, հնչերանգի, եղանակավորման և այլն։ Ինչ վերաբերում է արդի հայերենի բայական անդամ նախադասությունների մեջ տեղի ունեցող ստորոգման դրսևորումներին, ապա այդ հարցով հայ լեզվաբաններից առաջինը հետաքրքրվել է Ս. Արրահամյանը՝ նա իրավացիորեն նկատել է, որ բայական անդամ նախադասությունները՝ ա) «թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի, մեծ մասամբ՝ ...հենց իրեն՝ խոսողին», բ) «հաճախ ախնայիսի դործողություն են ցույց տալիս, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է ընդհանուրին՝ և՛ խոսողին, և՛ խոսակցին, և՛ ուրիշներին»³։

Նվ իրո՞ք, արդի հայերենի լեզվական փաստերը ցույց են տալիս, որ բայական անդամ նախադասությունները բովանդակության պլանում միատարր չեն։ Ընդ որում, անմիատարրություն է նկատվում այդ նախադասությունների լինելու և՛ անդամ բառով արտահայտված հատկանիշը ենթադրյալ ենթակային լինելու և թե՛ կերպառության նպատակի ու ոլորտի տեսակետներից։ Միշտ չէ, որ բայական անդամ նախադասության միջոցով խոսողը կարող է դիմել խոսակցին կամ բոլորին ընդհանրապես, միշտ չէ, որ խոսողը կամ խոսքի հեղինակը կարող է արտահայտվել ինքն իր մասին կամ հաղորդում տալ մի երրորդ անձի կամ առարկայի վերաբերյալ։

Արդի հայերենի բայական անդամ նախադասությունների բովանդակության ուղանք, մասամբ նաև կիրառության ոլորտը դիտական քննության է առել Ն. Պրոտասյանը՝ ելնելով այդ նախադասությունների հետ դրանց ունեցած շարահյուսական հոմանիշության տեսանկյունից⁴։ Նա առանձնացրել է բայական անդամ նախադասությունների երկու հիմնական տեսակ՝ ա) նա-

¹ Գ. Ջահուկյանը, հակառակ ընդունված կարծիքի, անորոշ դերբայով արտահայտվող միակազմ նախադասությունները համարում է անվանական միակազմ նախադասությունների մի տեսակ, որպես կրկնակի փոխակերպման արդյունք՝ «դիմավոր ձևի գործառական փոխակերպում» դրականացում և վերջինիս ստորոգական փոխակերպում՝ վերածում նախադասության (տե՛ս նրա «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», Երևան, 1974, էջ 394)։

² Տե՛ս Ս. Արրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962; Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964, Ս. Գյուլբուրդյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ.։

³ Տե՛ս Ս. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 139։

⁴ Տե՛ս Ն. Պրոտասյան, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 57—63։

խաղաղասություններ, որոնցում արտահայտված գործողությունը վերաբերում է առաջին դեմքին⁵, Բ) նախաղաղասություններ, որոնցում արտահայտված գործողությունը վերաբերում է երկրորդ դեմքին⁶: Առաջին դեմքին վերաբերող նախաղաղասությունների շարքում Ն. Պառնասյանը առանձնացնում է այնպիսիք, որոնցում արտահայտված գործողությունը «կոնտեքստի թելադրանքով կարող է վերաբերել կամ խոսողին (առաջին դեմքին) և կամ երրորդ անձնավորությանը»⁷: Ինչ խոսք, որ այդ արժեքավոր գրքում քննարկվող բնմայի առանձնահատկությունը և ուսումնասիրության այլ նպատակադրվածություններ չէին կարող գիտնականին հնարավորություն տալ առանձնացնելու բայական անդամ նախաղաղասությունների բոլոր տեսակները (մանավանդ որ նրա նպատակը բայական անդամ նախաղաղասությունների դասակարգումը չի հղել):

Բայական անդամ նախաղաղասությունների մասին ասված ամենաթարմ խոսքը էդ. Աղայանի «Նախաղաղասություն և ասություն» բովանդակալից հոդվածն է⁸, որտեղ հեղինակը բայական անդամ նախաղաղասությունները և, ընդհանրապես, ասությունները ենթարկում է բազմակողմանի (ըստ հաղորդակցական-խոսքային իրադրության, բնույթի, ընդհանուր բովանդակության և կազմության) քննության: Էդ. Աղայանը գտնում է, որ խոսքը բաղկացած է «հաղորդումն իրացնող կամ արտահայտող նախաղաղասություններից կամ ասություններից»: «Նախաղաղասությունները ստորոգում ունեցող բառերը կամ բառակապակցություններն են, մինչդեռ ասությունները զուրկ են ստորոգումից»: «Դրանք (իմա՝ ասությունները—Գ. Ն.) քերականությունների մեջ այսպես կոչված միակազմ բայական անդամ, անվանական անդամ և բառ-նախաղաղասություններն են՝ իրենց բոլոր տեսակներով»⁹:

Մեր պատկերացմամբ, եթե «ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային ժամանակային և վերաբերմունքային հարաբերությամբ»¹⁰, ապա ճիշտ չի լինի կարծել, որ հետևյալ (ընդգծված) հաղորդակցական միավորն, օրինակ, զուրկ է ստորոգումից. «...ժողովի նախագահ Վարդգես Վարդապետյանն ինձ դիմելով ասաց.

—Ընկե՛ր Ալազան, դանի՛ներ թողնե՛լ» («Գրական թերթ», 1988, № 43): Այլապես ինչպե՛ս բացատրել այն հանգամանքը, որ դահլիճն ազատելու մասին հրամանը վերաբերում է երկրորդ ոչ թե՛ առաջին կամ երրորդ դեմքին: Ընդգծված նախաղաղասությունը շարահյուսական տեսանկյունից ոչնչով չի տարբերվում «—Ընկե՛ր Ալազան, դանի՛ներ թողնե՛լ» նախաղաղասությունից: Դրանց տարբերությունը արտահայտության պլանում է. ստորոգումը մի դեպքում իրականանում է անդամ բայով, մյուս դեպքում՝ դիմավոր: Այս և մի շարք այլ նկատառումներով մենք շարունակում ենք հարազատ մնալ ավանդույթին և անդամ բայով արտահայտված հստորդակցական միավորներն անվանել բայական անդամ՝ նախաղաղասություններ:

Արդի հայերենի բայական անդամ նախաղաղասություններն ըստ դիմային հարաբերությունների արտահայտման բաժանվում են չորս հիմնական խմբի՝ իրարից տարբերվելով նաև կիրառության ոլորտով:

Առաջին խմբի անդամ նախաղաղասությունների մեջ որպես գործողություն կատարող ենթադրվում է առաջին դեմքը: Այստեղ խոսողն անորոշ ձևով իրեն է վերագրում անդամ բայով արտահայտված հատկանիշը: Այլ կերպ ասած, այս խմբի նախաղաղասությունների մեջ տեղի է ունենում ներքին, անդրադարձ ստորոգում: Օրինակ՝

Չենտագրե՞լ արդյո՞ք, որ այդ կինը մնա իր ծննդավայրում («Քառոս»):

1 5 Նույն տեղում, էջ 58—63:

2 6 Նույն տեղում, էջ 57—58:

3 7 Նույն տեղում, էջ 59:

4 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, № 1, էջ 121—138:

5 Նույն տեղում, էջ 134:

6 10 Նույն տեղում, էջ 122:

Ախ, լինել թեթև, հրո՛ւմ, հրակա՛մ, Վառվել, ուրախ գոհ, զոհս շմերժի Արե՛վը—արև, ու Ա՛ղնի, ու Ռա՛. Վառվել ու մաւե՛լ աշխարհի վա՛ Զոհի՛ պես արդար, ինքնամոխիչ... (Մարի, էգ թուղուն):

Ինչպես նկատելի է, բերված նախադասությունների մեջ հատկանիշը ենթակային վերագրելու որոշակի ակտ չի կատարվում (ենթական բացակայում է, իսկ ստորոգյալն արտահայտված է անդամ բայով), սակայն, այնուամենայնիվ, բովանդակության պլանում այստեղ ենթակա է ենթադրվում միայն խոսողը¹¹:

Այս խմբի բայական անդամ նախադասությունների մեջ երբեմն ենթակա կարող են ենթադրվել խոսողները: Օրինակ՝

Դարեդին իշխանը... ասաց հանդիսավոր.

— Ուխտ ենք կաղմում և ուխտ ենք անում կովել և տեղի շտալ:

— Կովել և տեղի շտալ,—կրկնեցին իշխանները (Վարդանանք):

Աշխարհադուր քաջե՛ր, մեղ այս բյուրն է վիճակված:

Իրբե պաշտպանության սահմանագիծ:

Արդ հրաման. եթե մեղ մահ է սահմանել աստված,

Այն ընդունել կրժից, այլ ոչ թե կոնակից (Սևրա Գեղեցիկ):

— Ահավել լավ է մնալ քաղցած, քան լինել անձնատուր,—բացականչեց մեկը սուր հուզումնալից ձայնով:

Իսկ մի բանի այլ ձայներ տարբեր կողմերից.

— Դիմագրավել... կովել... մինչև վերջ...

Ձայները շատացան ու խառնվեցին իրար: Բոլորի միջից դարձյալ ջոկվում էին երկու բառ.

«Կովել... Դիմագրավել...» (Շալոց բերդը):

Նշակի թվի առաջին դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նախադասությունները դործածական են դրական լեզվի հատկապես շափածո ստեղծագործություններում¹², հիմնականում՝ քնարական ստեղծագործությունների մեջ, որտեղ հերոսն իր խոհերը, ցանկությունները երազանքները և այլն դիմավոր բալի փոխաբեն արտահայտում է անդամ բայով: Օրինակ՝ Պարենք մեր անձկացած ու նեղացած հողում,—Ի՛նչ ուզում է լինի. Հե՛րե անիծած (հմտ. հերե անիծեմ—Գ. Խ.) (Սեֆյանային վալս): Ահ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն ընկնել և կորչել, և նեղել հավետ, Ոչնչանալ ու մոռացվել ֆեզ հետ, Ավերվա՛ծ երազ—հայրենական տուն (հմտ. ընկնեմ, կորչեմ—Գ. Խ.) (Վահան Տերյան): Լինել կաղնի, մնալ հավետ այստեղ (հմտ. լինեմ, մնամ—Գ. Խ.) (Ն. Զարյան) և այլն:

Արձակ ստեղծագործություններում բայական անդամ միակազմ նախադասություններ սովորաբար հանդիպում են մենախոսությունների, այսպես կոչված, ներքին խոսքերի և խոսքային աչն հատվածների մեջ, որոնցում գրական հերոսը նկարագրվում է հոգեկան լարված դրության, տազնապալից ապրումների մեջ: Այսպիսի նախադասություններով խոսողն արտահայտում է իր զարմանքը, զայրույթը, երկմտությունը ինչ-որ բանի հանդեպ: Օրինակ՝ Ի՛նչ. Արշակին փող չտա՛լ. էլ ո՞ր օրվա համար է նրա հայրն այսքան կարողություն դիզել (մտածում է այրի Ոսկեհատը—Գ. Խ.): Տե՛ր աստված, ինչո՞ւ այսչափ հիմարանալ և կաշկանդվել մի անբացատրելի ուժից (մտածում է Միքայելը—Գ. Խ.): «...Ինչպե՞ս լինեալ այդ»,—ասաց նա մտքում «Պուպ թագավոր»):

Բնական է, որ առաջին դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նախադասությունները դործածական չեն երկխոսությունների մեջ: Խոսողն ինքն է իրեն հրամայում, հարցնում, կամենում, խորհուրդ տալիս կատարելու կամ չկատարելու որևէ գործողություն: Ահավախի՛կ՝

Խավարում, ցավերում փառանալ Մե՛ն—միայն... (Վ. Տերյան): Երբեք օր-

¹¹ Հմտ. Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 139: Ն. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 28:

¹² Տե՛ս ն. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 62:

վա այս միջոցին նա տանը չէր եղել: Այժմ ո՞ւր գնալ, ի՞նչ երեսով երևալ ընկերսերին («Քառոս»): .. է՛, քնե՛լ, քնե՛լ... Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր: Ու չմտածեմ ոչնչի մասին (Ե. Չարենց, «Անքուն գիշերին») և այլն:

Սակայն երբեմն խոսողն անդեմ բայով արտահայտված հատկանիշն իրեն է վերագրում նաև երկխոսությունների մեջ.

— Հայտնել սպարապետի՞ն, քե՞զ պիր սեպուհին ձեր ժամանումը:

— Պետք չէ,—ասաց հաղը, առանց երիտասարդ զորականին նայելու («Պապ թագավոր»):

— Լինել հա՞րձ...—հանկարծ ճշաց Փառանձեմը:—Ո՛չ, արքա՛... Սյու-նյաց իշխանի դուստրը...

— Մի՛ սխալվիր, Փառանձե՛մ: Ոչ թե հարձ, այլ թագուհի («Հայոց բերդը»):

Երբեմն այսպիսի (հատկապես հարցական հնչերանգով) նախադասու-թյուններին հաջորդում է հեղինակի կամ իր իսկ խոսողի պատասխանը՝ արտահայտված միակզմ կամ երկկզմ նախադասությամբ: Օրինակ՝

Ի՞նչ անել, արդյոք, բաժանվել մորի՞ց, քե՞զ կնոջից: Ոչ այս կարող է անել, ոչ այն («Քառոս»):—Ուրախա՞լ,—մտածեց նա,—կստե՞լ չեմ ուրա-նա, մազա՛ր կրակի կեռկրպագեմ, որ ողջ մնամ և կրոնս չախաճամ («Վարդանանք»):—Ի՞նչ կայսե՛ր... Ո՛չ, ես այդ անել չեմ կարող, քանզի իմ հի-վանդ ոչխարն ինձ համար առավել է, քան ուրիշի առյուծը («Պապ թագա-վոր»):—Ձեզ հանձնել եզգ՝ա՛... Ոչ, գավակնե՛րս: Երբե՛ք: Ես այդօրինակ որոշում չունեմ ընավ («Հայոց բերդը»):

Այսպիսի մի շարք նախադասությունների միջոցով արտահայտվում է ճարտասանական հարցում: Օրինակ՝

Եվ, վերջապես, ինչո՞ւ ինքնասպանություն գործել («Քառոս»): Եվ ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով մտերմանալ («Քառոս»):—Իսկ ինչո՞ւ շնարհանել, երբ խոսում են, ինչ թունավորված է,—կրկնեց առաջին ձայնը («Պապ թագավոր»): Ընդ որում նկատելի է, որ ճարտասանական հարցմամբ ժխտական նախադասությունների միջոցով արտահայտվում է տվյալ գործողությունը կատարելու, իսկ դրական (կամ հաստատական) նախադասությունների միջոցով՝ չկատարելու ցանկության, անհրաժեշտության, պահանջի կամ այլ գաղափարի: Օրինակ՝

Ինչո՞ւ շնետա՛րհբերվել այս բռնորով («Քառոս»):

— Ալեքսեյ...

— Նո՛ւ, Ալեքսեյ, Ալեքսեյ, Ալեքսեյը ճիշտ է ասում, և ինչո՞ւ թափցնել ճշմարտությունը («Քառոս»):

Գրական ստեղծագործություններում բոլորական և ժխտական այս տիպի նախադասությունները հաճախ հանդես են գալիս զուգորդված՝ որպես մեկ արդյ. կառույց: Օրինակ՝

Բայց, ո՛չ, ինչո՞ւ փախչել և զեթ մի անգամ շխտել նրա հետ պարզ («Քառոս»): Ինչո՞ւ, ուրեմն, այս հաղթությամբ բավականանալ և ավելի հե-րձու չդնալ («Քառոս»):

Հայտնի է, որ «արտասանվելով զանազան հնչերանգներով՝ անորոշ դեր-բայը կարող է արտահայտել եղանակային ամենատարբեր իմաստներ»¹³, «Գ. Զահուկյանն իրավացիորեն նշում է, որ անդեմ բայով արտահայտված միակզմ նախադասությունների խմբատառային դրսևորումները կարող են բազմազան լինել. նրանք ունեն և՛ բուն անվանական նախադասությունների, և՛ անհնթակա (միադեմ) նախադասությունների եղանակային տարբեր տի-պեր»¹⁴: Սակայն արդի հայերենում կան անդեմ նախադասություններ (դրանց գլխավոր անդամը կազմությամբ լինում է բաղադրյալ՝ արտահայտված «առնոճ ղերբայ + առնոճ ղերբայ» կաղապարով), որոնցում հնչերանգից

¹³ Մ. Ա. Խաչատրյան. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1987, էջ 187, Հմմտ. Վ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 38:

¹⁴ Գ. Զահուկյան. Նշվ. աշխ., էջ 407:

բացի եղանակավորման գործառույթ ունի նաև անդամ բայերից մեկը, սովորաբար՝ նախագասը, Օրինակ՝

Բայց ինչո՞ւ չփորձել երես առ երես կանգնել իրականության հետ (սփառսս), ինչո՞ւ չշարունակել կարծել, որ նրա տիրություն պատճառը Միքայելն է (սփառսս)։

Բանավոր խոսքի մեջ առաջին դեմք ակնարկող բայական անդամ նախագասությունների կիրառությունն ընդունված չէ։

Անդամ բայով արտահայտվող միակազմ նախագասությունների երկրորդ խմբի մեջ որպես գործողություն կատարող ենթադրվում է երկրորդ դեմքը։ Այսպիսի նախագասությունների միջոցով խոսողն անորոշ դերբայով արտահայտված հատկանիշը վերագրում է խոսակցին կամ խոսակիցներին։ Այդ դեպքին, անկասկած, նպաստում է խոսքային տվյալ իրադրությունը, որտեղ խոսողից կամ խոսողներից բացի ներկա են նաև խոսակից կամ խոսակիցներ։

— Ինչո՞ւ են օտարներն անցնում բակով, — հարցրեց կապիտանը դժգոհ։

— Նրանք նախկին տնատերերն են, — բացատրեց սպասյակը։

— Քչե՛լ բակից։

— Լսում եմ, կապիտան։

— Եվ բաղնիք տափացնել տա՛մ։

— Արդեն սկսում են տաքացնել (Դ. Դեմիրճյան, «Խոշտանգվածի ավանդոր»)։

— Կանգնե՛լ... — հրամայեց նա, ձայնը բարձրացնելով։

Սարկավազներն իրար նայեցին։

— Եվ ինչո՞ւ համար, տե՛ր սեպուհ... —

— Արձակել կալանավորների կապերը և թողնել իրենց տները, — ձայնն ավելի բարձրացրեց Պապը...

— Իսյց, տե՛ր, — առաջ գալով ասաց ըմբռնման սարկավազը ինքնավստահ և չհնազանդվելու շեշտով։ — Ինչպե՞ս կարելի է։

— Արձակե՛լ։ Ձեզ հրամայում է ձեր թագավորը, — գոռաց Պապը, չկարողանալով այլևս դսպել իրեն, մոռանալով, որ ծալտյալ է («Պապ թագավոր»)։ Իրաված օրինակներից նկատելի է, որ այս խմբի նախագասությունների մեջ նույնպես ստորոգումն ունի երկու դրսևորում. մի դեպքում անդամ բայով արտահայտված հատկանիշն ակնհայտ կերպով վերագրվում է եզակի թվի, մյուս դեպքում՝ հոգնակի թվի երկրորդ դեմքին։

Եզակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նախագասությունները հիմնականում կիրառվում են երկխոսությունների մեջ, սակայն չի բացառվում, որ այդ նախագասություններն արտաբերվեն որպես դուռ հաղորդում (մեծ մասամբ՝ հրաման), որին չի հետևում խոսակցի պատասխանը, Օրինակ՝

Մովպետան մովպետը... վեր թռավ տեղից և բաղկատարած մղվելով դեպի Հազկերտը՝ գոչեց դառնաձայն։

— Դատապարտե՛լ Արմենիան... (սվարդանանք)։

Ասում էին, որ թագավորը կարգադրել է կառավարիչ իշխանին. «Զխնայե՛լ ոչինչ»... (սլալոց բերդը)։

— Ո՛ւ, ո՛ւ, մի՛ անիր, — աղաղակեց վարսակը, — մի՛ կոտրիժ բարձր տրամադրությունը, Ինչո՞ւ վիրավորել նրան... (Դ. Դեմիրճյան, «Անահիտ») և այլն։

Հաճախ այս տիպի նախագասություններին հաջորդում է ոչ թե խոսակցի, այլ հեղինակի խոսքը խոսակցի կատարած գործողության մասին։ Օրինակ՝

Զինվորներից մեկն ուզեց հանել նրա ակնազարդ ոսկե մատանին, բայց մի ուրիշը պոռաց նրա վրա։

— Զվեցնե՛լ ոչինչ։ Պիղծ է դրա ամեն ինչը։

Եվ գինվորը ետ կանգնեց (սվարդանանք)։

Եզակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նա-

խագասությունները սովորաբար կիրառվում են այն ժամանակ, երբ խոսողը զանազան պատճառներով չի կամենում խոսակցին դիմել ուղղակի՝ երկրորդ դեմքի բայ-ստորոգյալով: Այսպես, երբ խոսողը գտնում է, որ անհույս հիվանդի կողքին նստելը տխուր պարտականություն է, քանի որ ոչինչ չի կարելի անել, զարմացած և վրդովված խոսակիցը պատասխանում է.

— Ոչի՞նչ,— ընդոստ շարժումով դարձավ նրան բժիշկը,— ինչպե՞ս ոչինչ: Գործ կա և շատ կա, և դա անվանել «ոչի՛նչ» (Դ. Դեմիրճյան, «Բժիշկը»): Այսպիսի բայական անդեմ նախադասությունների մեջ հաճախ կիրառվում է նաև կոչական, որով ավելի է ընդգծվում, որ անդեմ բայով արտահայտված հատկանիշը որոշակիորեն վերագրվում է երկրորդ դեմքին: Օրինակ՝

Հիվանդը խոժոռ նայեց բժշկին: Սա սկսեց հանգիստ.

— ...Քնել, բարեկամս, ... ընդունեցեք այս, հանդստացեք, ի՞նչ եք հուզվում (Դ. Դեմիրճյան, «Բժիշկը»):

Ընդ որում, եզակի թվով արտահայտված կոչականով խոսողը կարող է դիմել տվյալ խոսքային իրադրության մեջ գտնվող բոլորին.

Վաշտա՛կ, ի՞նքե՛ն Շամմուրամատ տիկին

կցանկանա հայոց աշխարհն ապաստանել,

Ապա վեհանձնաբար բնակեցրե՛ք նրան

Հայոց փառքին և հյուրընկալ ոգուն վայել,

Իսկ եթե նա կուզե վերադառնալ Ասորեստան՝

Ապա պատվո պատգարակով նաևապարհել...
Այսպես է կամեցել... Աբա՛ն (Արա Գեղեցիկ):

Հաճախ, թեպետ անդեմ բայով արտահայտված հրամանը տրվում է մեկին, սակայն որպես կատարող ենթադրվում են շատերը.

Հայր-Մարդայե՛տը կանչեց անմիջապես սպասավորների պետին՝ Վրենին ու հրամայեց.

— Կարգի բերել պալատը, պահած տեղերից հանել պալատի քանկար-ժեֆ իրերն ու փովածֆները և գաղաթել քաղալուրի բաժինը: Գորգեր փռել նույնպես և պալատի սանդուղների վրա մինչև միջնաբերդի պարիսպը... («Պապ թագավոր»):

Արդի հայերենում հաղորդակցման այս միջոցը տիպական է գեղարվեստական լեզվին և որպես ոճական հնարանք հիմնականում հանդիպում է արձակ ստեղծագործությունների մեջ, զինվորական, պետական, պաշտոնական իրադրություն նկարագրելիս: Օրինակ՝

Նա մեքենական տոնով ասաց.

— Հանգստացնե՛լ գյուղը:

— Իսում 'եմ, կապիտա՛ն,— նույնքան մեքենական տոնով պատասխանեց սերժանտը (Դ. Դեմիրճյան, «Խոշտանգվածի ավանդը»):

Բանավոր խոսքում եզակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդեմ նախադասությունների գործածությունն ընդունված չէ: Արդի հայերենի համար սովորական է կիրառել հրամայական եղանակի եզակի թվի բայ-ստորոգյալներ¹⁶: Օրինակ՝ Մաքրի՛ր (բայց ոչ՝ մաքրե՛լ) գրատախտակը: Նստի՛ր (բայց ոչ՝ նստե՛լ) տեղդ և այլն:

Հոգնակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդեմ նախադասությունների մեջ անդեմ բայով արտահայտված հատկանիշը որոշակիորեն վերագրվում է տվյալ խոսքային միջավայրում գտնվող բոլորին կամ միայն նրանց, ում ուղղված է խոսքը: Օրինակ՝

Բաթր... շտապեցրեց զինվորներին.

— Քշե՛լ ֆառատուփ, — հրամայեց նա («Պապ թագավոր»):

— Ես ոչ ոքի չեմ ընդունում: Դուք չբանա՛լ, — կարգադրեց նա ընդառաջ լեկող նաժիշտներին («Հայոց բերդը») և այլն:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս ենթախմբի նախադասություններով խոսողը (հնարավոր է նաև խոսողները) սովորաբար ինչ-որ բան է հաղոր-

¹⁶ Հմմտ. Ն. Պ. Խաչատրյան, «Երկ. աշխ.», էջ 57:

դուժ, հուսահանդուժ, կոշ անուժ իր խոսակիցներին: Այդ հոգամանը, կոշը, դիմումը կամ հրահանգը սովորաբար լինում է անառարկելի, քանի որ դրանց չի հետևում խոսակիցների պատասխանը: Օրինակ՝

Հետեից եկող մեքատ սպասեմի որոտալից ձայնը նոր թափ հաղորդեց հայ գինավորներին.

— Հասնե՛լ ե ձերբակալ անել... («Պապ թաղավոր»):

Անելով այս՝ նա կրկին դռնաց.

— Զորդնե՛լ ոչ մի հոռոմ... ողջ չթաղենի մեկին... («Պապ թաղավոր»):

Այս առումով՝ և. Առաքելյանը ճիշտ է նկատում. «Իրոք հրամայական, անորոշող ավելի կտրուկ է, անառարկելի, քան դիմավոր բայով արտահայտված հրամայականը»¹⁶: Ավելացնենք, որ այդ հրամանն առավել հատուկ է շեշտված է համառոտ լայական անդամ նախադասությունների մեջ: Օրինակ՝ նա իսկույն վեր թռավ տեղից ե թափով գնաց դեպի մուտքից առաջացող սրավորող գինավորները.

— Զմտնե՛լ,— դռնաց նա ահարկու ձայնով («Հայոց բերդը»):

— Խմում եմ Միխայիլ Մարկիչի ե Մուխոմյ Ամբարձումովիչի կենացը և խնդրում եմ նրանց համբուրվել իրարու հետ:

— Համբուրվել, այո՛, համբուրվել...,— գոչեցին ոմանք («Փառս»):

Սակայն երբ (ամբարձում—Գ. Խ.) տեսավ, որ նախարարներն անց են կացնում փղերի միջով, մռնչաց, աղաղակեց.

— Լուկերտել, կոխկրտել... («Վարդանանք»):

Հոգնակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նախադասությունները ես կիրառվում են գեղաբանական լեզվում՝ հատկապես ռուդմարունչ սահղծագործությունների, կինոսցենարների, ինչպես նաև թարգմանական դրականության մեջ.

Ասուր-Գարսի, հղիք սուրհանդակներն արագության,

Որ հաղորդեն դարձյալ և խստադույն ոճով

Իմ հոգամանը արքեներ.

Հայոց արևայի դեմ չուղղել ո՛չ սուր և ո՛չ նիզակ,

Ո՛չ նետ, ո՛չ պարսատիկ և ո՛չ գեներալի մի այլ տեսակ,

Այլ կենդանվույն բռնել գերի («Արա Գեղեցիկ»):

— Զոկատով գնա՛լ ե շրջապատե՛լ... կալանե՛լ անվնաս: Զսպանե՛լ, այլ ձերբակալ անել ողջանդամ,— կրկնեց նա («Պապ թաղավոր»):

Բովանդակության սյանում այս ենթախմբի բայական միակազմ նախադասությունները նկատելի աղերսներ ունեն հրամայական եղանակի հոգնակի թվով արտահայտված ստորոգյալ ունեցող երկկազմ¹⁷ և անվանական միակազմ նախադասությունների հետ չմատ.

Գնա՛լ, ոտներ շրջվեց դեպի գինավորները՝ հրամայելով.

— Լուրակե՛լ||— Լուրակեցե՛ք||— Լուրա՛կ:

Թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվի երկրորդ դեմքի ենթակա ենթադրող բայական անդամ նախադասությունները հայերենում կիրառվում են սկսած գրական լեզվի պատմության նախորդ շրջաններից: Օրինակ՝

Եւ անդէն վարվաղակի զՄանասէ՝ զիւր դրան երէցն յառաջ քան դիւր երթալն յԱմարաս յղեաց և ասէ. «Զիմ տեսիլդ մի՛ ումեմ յայտնել»։ Եւ բաղմութիւն սմբակակոխ ձիոցն յոյժ վարակոխ գործէր զճանապարհսն, Իսկ թագաւորն ասէ. «Ո՛չ ինչ դանդաղել»¹⁸:

Անդամ բայով արտահայտվող երրորդ խմբի միակազմ նախադասությունների մեջ հաղորդում է տրվում երրորդ դեմքով արտահայտված այն առարկայի (անձ կամ իր) կամ նրա կողմից կատարման ենթակա գործողության մասին, որը բառային արտահայտությունն ունի բայական անդամ նա-

16 Վ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 40:

17 Տե՛ս ն. Պատմական. Նշվ. աշխ., էջ 57:

18 Մովսես Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1983, էջ 73:

խաղաասության հետ զուգորդվող կամ հարակից մեկ այլ նախադասության մեջ: Օրինակ՝

Ուտել, անվերջ ուտել—ահա նրա կիրքը: Դուան փակվելու ձայնը լսելով՝ Արշակը կանգ առավ մոռալաթ:—Ի՞նչ անել. գնալ բախել ղուտը, թե՞ ետ դառնալ («Հայոց բերդը»): Սակայն աստված փռվել... այդ խիստ է դժվարին... Այն օրից, երբ նա սպանեց Նինոս թագավորին... (սկրա Գեղեցիկ):

Ինչպես նկատելի է, այս տիպի նախադասությունները կարող են հանդես գալ և՛ որպես կախյալ, և՛ որպես անկախ հաղորդակցման միավորներ: Սակայն այս նախադասությունների կիրառության հիմնական ոլորտը բարդ կառույցներն են: Այստեղ բայական անդամ և սրանց հետ զուգորդվող մյուս նախադասությունների կապը սոսկ կառուցվածքային չէ: Երբ ասում ենք՝ «Աղավաղել մեր պատմությունը», ապա տվյալ ձևով չի հասկացվում, թե ո՞ւմ մասին է խոսքը կամ ովքե՞ր են կատարել և կատարում հիշյալ գործողությունը: Նույն բանը կարելի է ասել նաև «Այս է մեր թշնամու մտադրությունը» նախադասության մասին, քանի որ այն իր տվյալ վիճակով թերիմաստ է: Նշանակում է՝ բարդ կառույցների մեջ կիրառվող բայական անդամ նախադասություններն իրենց նախորդող կամ հաջորդող (այլ կերպ ասած՝ զուգորդվող) մեկ այլ նախադասության (կամ նախադասությունների) հետ անպայման ունեն նաև տրամաբանական, իմաստային կապ («Աղավաղել մեր պատմությունը—այս է մեր թշնամու մտադրությունը»):

Զուգորդվող նախադասության մեջ հանդես եկող առարկան, որին բացահայտում, բնութագրում է անդամ բայով արտահայտված նախադասությունը, կարող է կատարել շարահյուսական զանազան գործառույթներ, ինչպես՝ ենթակալի [Բախել... դա կլինի շատ օտարոտի («Հայոց բերդը»)], ստորոգելի [Այս, կույ տալ ապտակը և հասարակական ծաղրի առարկան դառնալ, այս է քո լոգոկան, չէ՞ («Փառս»)], ձևի պարագայի [Այդ գյաղային մի լավ պիտի ծեծել տալ: Գիտե՞ս ինչպես. զցել կլուրում, ուրիշների առաջ, ծեծել, ծեծել ու ծեծել («Փառս»)] և այլն: Բայական անդամ նախադասությունների այս տեսակն, ուրեմն, լրացուցիչ հաղորդումով բացահայտում—բնութագրում է մեկ այլ նախադասության այս կամ այն անդամի բուն էությունը: Ասվածից՝ դժվար չէ հզրակացնել, որ այս խմբի բայական անդամ նախադասությունների ճնշող մեծամասնությունը ունի ստորագրա՝ դիրք և կատարում է բացահայտիչ շարահյուսական գործառույթ: Անսովորն այստեղ այն է, որ՝ ա) առարկաներն ու նրանց հետ կապված այլ հանգամանքները բացահայտվում են ոչ թե մեկ ուրիշ առարկայի (կամ առարկաների), այլ անդամ բայով արտահայտված գործողության միջոցով, բ) գլխավոր նախադասությունների հետ կապակցումը տեղի է ունենում շարահարական եղանակով: Օրինակ՝

Շան զգացմունք,—լիզել զարնող ձեռքը («Փառսներ»):

Այս տիպի որոշ նախադասությունների մեջ բացահայտիչ գործառույթից բացի զգալի է նաև որոշչային նրբերանգր: Օրինակ՝

Դժվար չէր գուշակել, որ գլուխները պաշարված են միայն մի զգացումով—վաստակել ուրբան կարելի է շուտ և ուրբան կարելի է շատ («Փառս»):

Բարդ կառույցների մեջ ստորագրական հարաբերությամբ հանդես եկող բայական անդամ նախադասությունները կարող են կապվել թե՛ երկկազմ և թե՛, հատկապես, անվանական միակազմ նախադասությունների հետ: Բայական անդամ նախադասությունների հետ զուգորդվող երկկազմ նախադասությունն ենթական կամ բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին ավելի հաճախ արտահայտված է լինում որևէ ցուցական (հազվադեպ՝ հարցահարաբերական) դերանունով (այս, այդ, սա, դա, այսպես, այդպես, այսպիսի, այդպիսի և այլն): Օրինակ՝ «Իսկ լուկ երևալայությամբ ստեղծել այսպիսի բոլոր անաղարտությունների մի սկզբնապատճառ,—այդ թե՛ շատ քիչ է, և թե՛ դրա վրա չես կարող զայրույթդ թափել»¹⁹: Այսպիսի բարդ կառույցները, որոնց

¹⁹ Ս. Գյուլբերկյան. նշվ. աշխ., էջ 141:

ման դեպքում երկկազմ նախադասության ընդգծված տիպի անդամները կրճատվում են (հմմտ. «Իսկ լուկ էրեակայությունը այսպիսի բոլոր անաղաբությունների մի սկզբնապատճառ ստեղծելը թե՛ շատ քիչ է, և թե՛ դրա վրա չես կարող զայրույթդ քաշել»): Նշանակում է՝ զուգորդվող երկկազմ նախադասությունների մեջ հիշյալ անդամները հանդես են գալիս ձևականորեն՝ նշան, նաև, որ այսպիսի որոշ բարդ կառույցների մեջ այդ ձևական անգամը բացակայում է՝

Նրա հանդեպ սիրո տարփա՞նք տածել...

Քվում է մանադիք հանդգնություն (սկրա Գեղեցիկ):

Նրբ որպես զուգորդվող նախադասություն բարդ կառույցի մեջ հանդես է գալիս անվանական միակազմ նախադասություն, ապա այն իր կազմում ավելի հաճախ ունի ահա ցուցական վերաբերականը, որով ավելի են ընդգծվում, մատնացույց արվում թե՛ այդ նախադասության մեջ առկա բացահայտվող անդամը, թե՛ անդամ բայով արտահայտված գաղափարը, Հմմտ. Սրբել զավապենեին, չսիրել նրանց մորը, — ահա այն սոսկալի դիլլեման, որ տանջում էր հոգին տարիների ընթացքում («Քառս»), Հեռանալ, հեռանալ, — կրկնեց Պապը — Ահա միակ ճշմարիտ ել՛ր («Պապ թագավոր») և այլն:

Ինչպես ուսացինք, ն. Պառնասյանը բերում է մի քանի նախադասություններ (Օլիմպիան կանդ առավ. մտնե՛լ, թե չմտնել, նրանք վարանանքով կանդ առան, Ի՞նչ սնել, շարունակե՛լ ճանապարհը, թե ետ դառնալ)²⁰, նշելով, որ իրանք ենթատեքստի թելադրանքով կարող են վերաբերել կա՛մ առաջին, կա՛մ երրորդ դեմքին, Մեր կարծիքով, այդպիսի նախադասությունների մեջ անորոշ դերբայով արտահայտված հատկանիշը վերագրվում է երրորդ դեմքին, քանի որ բերված տիպի բարդ կառույցների մեջ և խոսքային հապավածներում առկա է ոչ թե խոսողը, որ կարողանար անդրադարձ ստորոգյալում իրեն վերադրել անդամ բայով արտահայտված հատկանիշը [հմմտ. «Ա՛յր գնալ, Ի՞նչ անել», — մտածում էի և որոշեցի վերջ տալ կյանքիս («Գրտուն»), 1938, № 7, էջ 34)], այլ խոսքի հեղինակը, որը հաղորդում է տալիս երրորդ դեմքի կողմից կատարելի կամ կատարված գործողության մասին, Օրինակ՝

Դուսն փակվելու ժայնը լսելով՝ Արշակը կանդ առավ մոռնալով: — Ի՞նչ անել. գնալ բախե՛լ դուռը, թե՛ ետ դառնալ («Հայոց բերդը»):

Երրորդ դեմքի առարկա կամ վերջինիս հետ կապված հանգամանքներ անվանող բայական անդամ նախադասությունների կիրառության հիմնական ոլորտը գեղարվեստական խոսքն է: Օրինակ՝

Ինչե՛լ իշխանուհի և ունենալ մի գեղեցիկ աղջիկ..., — դա մի գանձ է²¹, Խարել մտերիմ ընկերոջը և նրա պատվի գնով հանույժ վայելե՛լ — ահա ինչումն է բուն ախտը Սմբատի հայացքներով («Քառս»), Ի՞նչ շնչին և ծագրելի կյանք — գտնվել երկու հակառակ տարրերի մեջ և կատարել ինչ-որ անգործ ճշմանակի դե՛ր երկու կողմից տեղացող կրակի համար («Քառս»):

Անդամ բայով արտահայտվող շորորդ խմբի միակազմ նախադասությունների մեջ ստորոգյալը կրում է տարտամ բնույթ, քանի որ այստեղ անդամ բայով արտահայտված հատկանիշը վերադրվում է ոչ թե որոշակի կրողի կամ կրողների, այլ բոլորին ընդհանրապես²², Օրինակ՝ «Չծխել» նախադասությամբ լծխելու հրահանգ է տրվում բոլորին: Ընդհանուրին են վերադրվում նաև «Պահպանել բնավայրում», «Պաշտպանել անվտանգ երթևեկության կանոնները» և համանման նախադասությունների մեջ արտահայտված գաղափարները: Անորոշ դերբայով արտահայտված հատկանիշը բոլորին վերաբերելու նպատակով է այն հանգամանքը, որ այս խմբի նախադասությունները կիրառվում են բացառապես որոշակի խոսակցի կամ խոսակցիների բացակայության դեպքում: Սրանով է բացատրվում և այն, որ

20 Ն. Պառնասյան. նշվ. աշխ., էջ 59:

21 Ս. Գյուլբերդյան. նշվ. աշխ., էջ 141:

22 Տե՛ս Ս. Արտահայտյան. նշվ. աշխ., էջ 139:

այս տիպի նախադասություններին չի հետևում պատասխան, որն էլ, անշուշտ, նշանակում է, թե երկխոսությունների մեջ այս նախադասությունների կիրառությունը ընդունված չէ:

Ընդհանրական ենթակա ենթադրող բայական անդամ նախադասությունները շարահյուսական համանիշներ են կազմում դիմավոր բայով արտահայտվող ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների հետ: Երկու դեպքում էլ ստորոգումը կրում է տարտամ, ոչ որոշակի, ընդհանրական բնույթ, և որպես ենթակա կարող են ենթադրվել բոլորը: Հմմտ. Պաճպանել լսություն||Պաճպանեցեմ լսութուն: Մեր պատկերացմամբ, նպատակահարմար է անդամ բայով արտահայտվող նախադասությունների այս տեսակն անվանել ընդհանրական-անդամ:

Ընդհանրական-անդամ նախադասությունների կիրառության հիմնական ոլորտը զրավոր խոսքն է, որտեղ դրանք հանդես են դալիս լուղունգների, կոչների, ցուցանակների և այլ ձևերով: Օրինակ՝

Լնի ջուրը շաղտոտե՛լ: Աչի՛ լույսի պես պաճպանե՛լ հասարակական սեփականությունը²³:

Կոչերից ու լուղունգներից առավել՝ ընդհանրական-անդամ նախադասությունները գործածվում են դասագրքերում, ինչպես նաև դպրոցական և բուհական զանազան ձևերով, որպես բոլորին ուղղված հանձնարարություն, պահանջ և այլն: Օրինակ՝ «Արտագրել տրականի ձև ունեցող բոլոր գոյականները և յուրաքանչյուրի դիմաց գրել՝ հայցական, թե՞ տրական հոլովով է գործածված»²⁴, «Գացատրել, թե հետևյալ նախադասության տարբերակների մեջ ինչպես է կատարվում ժխտումը: Ընդգծել շաղկապները»²⁵ և այլն:

Բանավոր խոսքում ընդհանրական-անդամ միակազմ նախադասություններ գործածվում են գլխավորապես հանդիսավոր խոսքերի, ճառերի, զեկուցումների մեջ՝ «հատկապես հոնտորական նպատակներով»²⁶:

Արդի հայերենի բայական անդամ նախադասություններն ուսումնասիրող հայ լեզվաբանները որպես այդ նախադասությունների գլխավոր անդամի արտահայտման միջոց նշում են անորոշ դերբայը: Վ. Առաքելյանը, ապա նաև Ս. Գյուլբուդաղյանը անորոշ դերբայից բացի բերում են նաև հարակատար դերբայով արտահայտված գլխավոր անդամ ունեցող բայական անդամ նախադասությունների ընդամենը հինգ օրինակ («Թ՛ֆած, —ասաց. նույն համարձակ լեյտենանտը: Թ՛ֆած փողի վրա. դու մարդու լավությունն ասա»²⁷, «Իսկ եթե, —ենեմ էլ անիծած, թող լինի—ինչով ենք ուրիշներից ավել: Աշխարհը ղրկվել է այդպիսի մեծ մտքերից: Թ՛ֆած:—Իսկ դու լեզուդ կա՛րճ պահիր, Կո՛նկին:—Թ՛ֆած...»²⁸, որոնցից շուրջ՝ թ՛ֆած հարակատարով: Պետք է նկատել, սակայն, որ թ՛ֆած և անիծած հարակատարները բայական անդամ նախադասությունների գլխավոր անդամ են դառնում նաև այլ կապակցությունների տեսքով: Վերջիններս որպես հաղորդակցման միջոց ավելի տիպական են, քան «Թ՛ֆած»-ը կամ «Հենեմ անիծած»-ը, որոնք ավելի շատ վերաբերականի գործառույթ են կատարում, քան անկախ նախադասության օրինակ՝

— Վո՛ւյ, քոռանամ ես, պապիս հիշատակը...

— Անիծած մեջը, սա ի՞նչ է՝ պահել ես, —գոռաց Հրանտը և գավազանը... տարավ բակը նետեց (Դ. Դեմիրճյան, «Իրեր»):

— Էդպես ես, միշտ կոպիտ, վայրենի, ի՞նչ էր ուզում քեզնից գավազանը՝ վաթսուն տարվա հիշատակը:

²³ Տե՛ս Վ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 40:

²⁴ Է. Աղայան, Հ. Բարսեղյան. Հայոց լեզու, Երևան, 1978, էջ 27:

²⁵ Վ. Ս. Թումանյան. Շարահյուսական վարժություններ 8-րդ դասարանի համար. Երևան, 1976, էջ 16:

²⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 129:

²⁷ Տե՛ս Վ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 43:

²⁸ Տե՛ս Ս. Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 142:

— Անհիծած մեջը (նույն տեղում)։

— Իսպես կյանքի մեջն էլ թփած,— ասաց Հրանտն ու գլխարկը խելով դուրս թռավ (նույն տեղում)։

— Քո հերն էլ անհիծած,— ձեռքը խփեց դախին Վուլունիկ Տեր-Մարությանը (Գ. Դեմիրճյան, «Խորհրդավոր արկղը») և այլն։

Սրանցից բացի՝ կան հարակատար դերբայով արտահայտված բայական անդամ նախադասություններ, որոնք ունեն առածական խոսքի արժեք։ Ահա՝ վասիկ դրանցից մը քանիսը՝ «Անուկը աված, խալիչեն փռած» («Հայկական առածանի»)։ «Արծյուր շրմած, մկների փախած» (նույն տեղում)։ «Նառաճիկն աշխատած, Թաթին կերած» (նույն տեղում)։ «Մալի սիրած, աստծու օրհնած» (նույն տեղում)։

Հարկատար դերբայով անդամ նախադասություններ են կազմում նաև սիկնուլն հարակատար դերբայի դրական և ժխտական տարբերակների զուգադրման եղանակով։ Օրինակ՝ «Նրան՝ ասած-չասած»։ «Ի՞նչ տարբերություն՝ գնացած, թե՞ չգնացած» և այլն։

Բայական անդամ կարելի է համարել նաև հետևյալ խոսքային միավորները, որոնցում, անշուշտ, առկա է եղանակավորման երանգը.

Սիրո՞ւմ ես... Ի՞նչ արած (հմմտ. Դ. Ա. անհմ—Գ. Խ.)... մեկնի՛ր Աստուծոյ,

Շամիրամից արդեն եկել է նոր դեսպան («Արա Գեղեցիկ»)։

— Ճշմարիտն ասած (հմմտ. Եղիշտի ասեմ—Գ. Խ.), Պա՛պ, ինձ ևս տարօրինակ է թվում այս վերաբերմունքը («Պապ թագավոր»)։

Հարակատար դերբայով են արտահայտված նաև հետևյալ խիստ յուրօրինակ բայական անդամ նախադասությունները.

Անուշը կանգնած... Սարոն նկատեց... («Անուշ»)։

Աստա՛ր կառափնաւովա՞ծ...

Շամիրամի հավատարիմն ու սիրելի՞ն...

Եվ ընդակի՛ցը... ո՞վ աստվածների աստված... («Արա Գեղեցիկ»)։

Առածական խոսքի արժեք ունեն նաև հետևյալ բայական միակազմ նախադասությունները, որոնց զիջավոր անդամն արտահայտված է ենթակայական դերբայով. «Օր քանոյ, օր ուտոյ» («Հայկական առածանի»)։ «Հավի հետ քնոյ, հավի հետ գործնոյ»։ «Մեջ ուտոյ, դուրս մա՛ն Եկոյ»։

Հարկ է նշոյ, որ հարակատար և ենթակայական դերբայներով առաջահայտված բայական անդամ նախադասությունները հատուկ են արդի հայերենի բարբառային և ժողովրդական խոսակցական ոլորտներին։ Գեղարվեստական լեզվում դրանց դործածությունը հնաապինդում է խոսքը ռեալիստիկ նպատակի

ВЫРАЖЕНИЕ ЛИЧНЫХ СООТНОШЕНИИ В ОДНОСОСТАВНЫХ ИНФИНИТИВНЫХ ПРЕДЛОЖЕНИЯХ

Г. К. ХАЧАТРЯН

Резюме

По выражению личных соотношений односоставные инфинитивные предложения современного армянского языка делятся на четыре группы: 1. В предложениях первой группы в качестве совершающего действия выступает говорящий или говорящие. 2. В предложениях второй группы речь относится к собеседнику или собеседникам. 3. В предложениях третьей группы содержится информация о выраженном в третьем лице субъекте или подлежащем совершению последнем действии, имеющем словесное выражение в сочетающемся с ним или прилежащем к нему предложении. 4. В предложениях четвертой группы выраженное инфинитивом действие приписывается всем вообще. Каждый из вышеуказанных видов имеет свою специальную сферу применения. Главный член односоставного инфинитивного предложения выражается в основном инфинитивом, однако средством выражения могут послужить также прошедшее результативное и субъектное причастия.